ՀՏԴ 159.9

# ԱՆՏԻԿ ՓԻԼԻՍՈՓԱ՝ ՊԼԱՏՈՆԻ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ՀՈԳՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

*Մ.Ե.Մելիքսեթյան*

հոգեբանության և մանկավարժության ամբիոն

*70 տարի մենք ապրել ենք մի ժամանակաշրջան, երբ առբլիմացվել (վեհացվել) է մի գաղափարախոսություն, որի անունն էր մատերիալիստական և ժխտվել և ոչ թե քննադատվել, իդեալիստականը, ու թարգմանվել և մասսայական մատչելիությանն էր հասցվել այն ինչ համահունչ էր սոցիալիստական գաղափարախոսությանը: Քանի որ վերջին ժամանակները հաճախակի է խոսվում հոգու անմահության, այնկողմնային կյանքի հոգեերևույթների մասին, նպատակ դրվեց հասարակության լայն խավերին ներկայացնել Պլատոնի մոտեցումները հոգու անմահության շուրջ:*

Չինական փիլիսոփա Կոնֆուցիոս նշել է. «Ուսումնասիրեցեք անցյալը, եթե ուզում եք կանխագուշակել ապագան»:

Հին հունական փիլիսոփա, անտիկ իդեալիզմի խոշորագույն ներկայացուցիչ Պլատոնը՝ Պղատոն Աթենացի «իսկական անունը Արիստոկլես», ծնվել է արիստոկրատական ընտանիքում, գործել 427-348 մ.թ.ա., աշակերտել Կրատիլոսին, այնուհետև հիմնականում Սոկրատեսին: Չնայած Պլատոնի ստեղծագործական աշխատանքը շատ մեծ է, մոտ 36 աշխատանք, որը լրիվությամբ հասել է մեզ, սակայն հատուկ աշխատանք նվիրված հոգեբանությանը չկա, մինչդեռ նրա որոշ աշխատություններում շոշափվում են հոգեբանական հարցեր: Այսպես՝ «Մենոն»-ում շարադրված են վերհուշերի թեորիան, «Ֆեդոն»-ում տրված է հոգու կրոնական մեկնաբանությունը, «Թեետետոս»-ը նվիրված է հոգու մասին Հերակլիտի տեսության քննադատությանը, «Ֆեդոն»-ում ներկայացված է հոգու անմահության մասին տեսությունը, «Պետություն» աշխատության մեջ ընդգրկված է հոգու կառուցվածքի և այն մասերի բաժանման մասին Պլատոնի տեսությունը:

Ըստ Պլատոնի՝ մարդու հոգին կախված չէ մարմնից: Նա գոյություն ունի մինչ օրգանիզմի ծնունդը և օրգանիզմի մահից հետո: Նա մի մարմնից կարող է տեղափոխվել մյուսը: Հոգու անմահության հիմնավորվածության համար Պլատոնը տալիս է 4 ապացույց: Առաջինը հիմնված է հակադրության սկզբունքի վրա: Ըստ Պլատոնի՝ աշխարհը լիքն է հակադրություններով՝ գեղեցիկ-տգեղ, բարի-չար, քուն-արթնություն և այլն: Մի շարք միջանկյալ վիճակների միջով մի հակադրությունը ծնվում է մյուսից, օր.՝ քուն-արթնացում-արթնություն, ցերեկ-մթնշաղ-գիշեր, գիշեր-արշալույս-ցերեկ և այլն: Նման ձևի էլ ծնվում է կենդանին մահացածից, իսկ մահացածը՝ կենդանիից: Այսպես, բարձր մաքուր հոգուց անցման ժամանակ տեղի ունի կիսահոգևոր վիճակներ, որոնք աստիճանաբար ավելի սերտ կապվելով մարմնի հետ, բերում է այնպիսի որակների, որոնք մարմնի հետ կարող են քայքայվել:

Մահվան փոխարկումը կենդանացման տեղի է ունենում հոգու օգնությամբ: Որպեսզի կենդանիի փոխարկումը մահվան և ընդհակառակը տեղի ունենա, պետք է, ըստ Պլատոնի, որ գոյություն ունենան մահացողների հոգիները, միշտ պատրաստ մտնելու ծնվող մարմիններ: Նման դեպքում հոգին պետք է գոյություն ունենա մարմնի ծնվելուց առաջ և մահվանից հետո, այսինքն լինի մշտական և անմահ:

Հոգու անմահության 2-րդ ապացույցը կառուցված է վերհուշերի թեորիայի հիմքի վրա: Պլատոնի կարծիքով մարդը բացահայտում է իրերի նմանությունները և տարբերությունները առանց որևէ ուսուցման: Մարդը գիտելիքները ձեռք է բերում ի շնորհիվ մտաբերման հոգու լի ծնե ընդունակությունների: Բայց մարդու հոգին կարող է հիշել այն, ինչ նախկինում արդեն գիտեր: Դրա համար հոգին պետք է տիրապետեր գիտելիքներին մինչ այն, քանի դեռ չէր բնակվել մարմնում: Մինչդեռ դա հնարավոր չէր լինի, եթե հոգին գոյություն չունենար մինչև նրա բնակվելը ծնվող մարմին: Եվ եթե հոգին գոյություն ունի մինչև մարմնի ծնվելը, ապա նա կարող է և պետք է գոյություն ունենա և մարմնի մահից հետո, ուրեմն, ըստ էության, նա մշտական է և անմահ:

3-րդ ապացույցը հիմնված է հոգու և գաղափարների նույնականության մասին դրույթի վրա: Պլատոնը պնդում է, որ բոլոր բաղադրվածը, բարդը քայքայվում և մահանում է, քայքայման ենթակա չէ միայն հասարակը և ոչ բաղադրվածը: Այս տեսանկյունից մարմինը միշտ կա ինչ-որ տեսանելի, բաղադրված, փոփոխական, և որի համար նրան հատուկ է քայքայվելը և մահը: Ի հակադրություն մարմնի, մարդու հոգին և գաղափարները տեսանելի չեն, բաղադրված չեն, և անփոփոխելի, և որի համար նրանք ենթակա չեն քայքայման և մշտական են: Եթե հոգին իմացության ժամանակ օգտվում է մարմնային օրգաններից, նա շեղվում է իսկական ճանապարհից, դառնում հարբածի նման: Երբ նա իմանում է ինքնուրույն, ապա նա տանում է գաղափարների աստվածային աշխարհը, որտեղ ամեն ինչ հասարակ է, անբաժանելի, անտեսանելի և մշտական: Նշանակում է հոգին ազգակից է աստվածայինին և նման նրան: Իսկ ինչ աստծոց է և նման նրան, ապա մշտական է և անմահ:

Աշխարհը, ըստ Պլատոնի, կառուցված է այնպես, որ ողջ մարմնայինը ենթարկվում է աստվածայինին: Երբ հոգին բնակվում է մարմնում, ապա վերջինս սկսում է ենթարկվել նրան: Իսկ ինչ ստեղծված է իշխելու և կառավարելու, ապա ունի աստվածային ծագում: Եվ քանի որ աստվածայինը մշտական է, ուրեմն և մարդու հոգին անմահ է:

Եվ վերջապես վերջին ապացույցը կայանում է նրանում, համաձայն որի հոգին իր մեջ ընդգրկում է կյանքի սկիզբը: Հոգին, բնակվելով որևէ մարմնում, միշտ նրան կյանք է նվիրում: Եվ այն, ինչ կյանք է տալիս, նա մահ չունի, այսինքն՝ մահկանացու չի կարող լինել: Այստեղից մարդու հոգին պետք է լինի անոչնչացնելի և անմահ:

Բերված փաստերից տեսնում ենք, որ բոլոր նրանք ուղղված են մարմնից հոգու անկախության հիմնավորմանը: Մարդու մարմինը հոգու համար ժամանակավոր ապաստարան է: Նրա մնալու հիմնական տեղը աստվածային բարձունքներն են, որտեղ նա ձեռք է բերում հանգիստ մարմնային կրքերից և հաղորդակցվում գաղափարների աշխարհին: Բոլոր մարմնային հոգիներին վիճակված չէ հասնել աստվածային բարձունքներին: Նրանց հոգին, որոնք եղել են մարմնային բուռն ցանկությունների՝ անառակ, գերին որոնք ենթարկվել են որկրամոլության կամ այլ մարմնային անչափավորությունների, սերունդների միջով վերածնվում են կենդանիների հոգու՝ էշի, գայլի, ագռավի և այլնի մեջ: Գաղափարների աստվածային բարձունքներին մոտենում են միայն փիլիսոփաների հոգիները, քանի որ միայն նրանց է հատուկ համարյա լրիվ ազատվել մարմնային գերությունից:

Հոգին, գտնվելով գաղափարների աստվածային աշխարհում, նրանից ստանում է գիտելիքների այն պաշարը, որը մատչելի է նրան՝ կախված անցյալ մարմնային ծանրաբեռնվածությունից: Այնուհետև իջնելով երկիր և մտնելով մարմին, հոգին լցնում է այն ամենը, ինչ նա գնել և ինչի հետ շփվել է գաղափարների աշխարհում: Նրա հետագա գործունեությունն ուղղված է միայն նրան, որպեսզի արթնացնի և ակտիվացնի աստվածային աշխարհում ձեռք բերած գիտելիքները, զբաղվի գաղափարների դիտարկմամբ և նրա էության մեջ թափանցմամբ: Ըստ Պլատոնի, այս գործունեության դեպքում անօգուտ է դիմել զգայական օրգաններին կամ այլ մարմնային միջոցների: Նրանք միայն արգելք, խոչընդոտ են ճշմարտության հասնման ճանապարհին: Մարդու մարմինը և նրա զգայական օրգանները հոգուն բերում են միայն հոգսեր, պահանջում ուշադրություն, հոգուն շեղում իր հիմնական իմացական գործունեությունից՝ մտաբերումից: Հոգին լավ է մտածում, երբ նրան չեն անհանգստացնում ոչ տեսողությունը, ոչ լսողությունը, ոչ ցավը, ոչ հաճույքը: Առավել ևս, զգայական օրգանները մեզ ճշմարիտ գիտելիքներ չեն տալիս: Պլատոնը ցույց է տալիս այն, որ տեսնելով, օր. ուրիշ լեզվի բառեր, մարդը չի կարող հասկանալ նրանց իմաստը, ստացվում է զգայությունը և ընկալումը որպես այդպիսին կան, բայց ոչ մի գիտելիք նրանք մարդուն չեն բերում: Դրա համար ճշմարտությունը մատչելի է միայն բանականությանը,տիրապետողը «մաքուր» գաղափարների կենդանացման ընդունակությունն է, որոնց հետ հոգին հանդիպել է գաղափարների աշխարհում, լինելով ազատ մահկանացու մարմնից:

Քանի որ մարդկային հոգիները նրանց մարմնային ծանրաբեռնվածության պատճառով տարբեր են գնել բարձր գաղափարները, ապա երկրի վրա ևս, մտնելով նոր մարմին, նրանք ստեղծում են մարդկանց հիերարխիա՝տարբեր ըստ բանականության: Հոգին աստվածային աշխարհում տեսնելով և ընդունելով բարձրագույն գաղափարների մեծ մասը, բնակվում են ընտանիքներ, որոնցում ծնվում է փիլիսոփա: Փիլիսոփայից հետո բանականության ընդունակությունների մակարդակով մտնում է թագավորի կամ ռազմապետի, այնուհետև պետական գործչի մեջ և այլն:

Մարդու մոտ Պլատոնը առանձնացնում է հոգու երկու մակարդակ՝ բարձր և ցածր: Բարձր մակարդակը ներկայացված է հոգու խելացի մասով: Նա անմահ է, անմարմին, հանդիսանում է իմաստնության հիմքը և կատարում է ղեկավարող ֆունկցիա ցածր հոգու և ողջ մարմնի նկատմամբ: Խելացի հոգու ժամանակավոր ապաստարանը համարվում է գլխուղեղը:

Ցածր հոգին իր հերթին ներկայացվում է երկու մասով կամ մակարդակով՝ հոգու ցածր առաքինի մաս և ցածր բուռն կրքերի հոգի: Առաքինի հոգին իր մեջ ընդգրկում է ազնվական վիճակների և ձգտումների բնագավառը: Նրա հետ կապված է կամքը, խիզախությունը, արիությունը և այլն: Հոգու այս մասը կարծես թե կատարում է կենդանիների հոտը պաշտպանող շան դեր: Նա ամբողջությամբ գործում է ռովկի կամ հոգու բանական մասի թելադրանքով: Հոգու այս մասին բնորոշ է սերտ կապ մարմնի հետ, տեղադրվում է նա սրտի շրջանում: Բուռն կրքերի կամ ցածր հոգին ընդգրկում է պահանջմունքների, հակումների և կրքերի ոլորտը: Հոգու այս մասը նման է հոտի, որը բանական և առաքինի հոգու կողմից պահանջում է կառավարում: Բուռն կրքերի հոգու լոկալիզացիան լյարդն է:

Հոգու կառուցվածքի բերված սխեմայից տեսնում ենք, որ Պլատոնը առանձնացնում է նրա երեք մակարդակը, որը անվանում ենք «հոգու կառք»: Հոգու երեք մասերի բաժանման հիման վրա Պլատոնը տալիս է անհատական բնավորությունների դասակարգում, տարբեր ժողովուրդների բնավորությունների, կառավարման ձևերի, հասարակության բաժանումը դասերի: Մարդիկ տարբերվել են հոգու այս կամ այն մասի գերակշռությամբ: Իմաստուններին և փիլիսոփաներին բնորոշ է բանական հոգին: Խիզախների մոտ դոմինանտ է առաքինի հոգին, մարմնային անչափավորություններով մարդկանց մոտ առաջնային է բուռն կրքերի հոգին:

Բանական հոգու գերակշռությունը, ըստ Պլատոնի, հատուկ է հույներին, առաքինի հոգու գերակշռությունը՝ հյուսիսի ժողովուրդներին, բուռն կրքերի հոգին՝ եգիպտացիներին և արևելքի այլ ժողովուրդներին: Դասերի հիերարխիան ևս կառուցվել է հոգեբանական սկզբունքով: Մեծ խելք հատուկ է արիստոկրատներին, խիզախությունը՝ զինվորներին, կրքերը և հակումները՝ արհեստավորներին և ստրուկներին: Այստեղից արվել է ղեկավարման ձևի ենթադրություն: Իդեալական էր համարվում այն պետությունը, որը ղեկավարում են արիստոկրատները, պահպանությունը վարում զինվորները, իսկ աշխատում և ենթարկվում՝ արհեստավորները և ծառաները: Պետության մեջ զինվորական իշխանությունը բերում է բռնապետության, իսկ ավելի վատ, երբ պետությունը գլխավորում է դեմոսը, որը բերում է անկարգության և քաոսի: Ըստ Պլատոնի՝ պետության մեջ մարդիկ պետք է գրավեն իրենց տեղը համապատասխան իրենց ժառանգական նախադրյալների. «նրա համար, ով իր բնական նախադրյալներով պիտանի է կոշկակարի, ճիշտ կլինի զբաղվի միայն կոշկակարությամբ և չզբաղվի ոչնչով, իսկ ով պիտանի է հյուսնի՝թող զբաղվի հյուսնությամբ: Այս նույնը և այլ դեպքերում»:

Բայց միաժամանակ Պլատոնը մեծ նշանակություն է տվել և դաստիարակությանը: «Ճիշտ դաստիարակությունը և ուսուցումը մարդու մեջ արթնացնում են լավ բնական նախադրյալներ, որոնք նրանց մոտ արդեն կան: Ի շնորհիվ լավ դաստիարակության նրանք դառնում են ավելի լավ և ակտիվ, նաև իրենց սերունդներին փոխանցելու իմաստով»,- գրված է «Պետության» մեջ: Պլատոնի մտքերը դաստիարակության մասին հիացմունքի գնահատականի արժանացավ Ռուսսոյի մոտ: Ռուսսոն գրել է. «Ցանկանում եք ստանալ հասարակական դաստիարակության մասին հասկացություն – ընթերցեք Պլատոնի «Պետությունը»: Դա ոչ թե քաղաքական ստեղծագործություն է, ինչպես մտածում են որոշները դատելով գրքի մասին վերնագրով, դա փայլուն, որը միայն կազմվել է - տրակտատ է դաստիարակության մասին»:

Պլատոնին հաջողվեց ցույց տալ, որ բանականությունը ընդհանուր նշանակալից կատեգորիաների, գաղափարների և հասկացությունների համակարգ է: Մինչդեռ այս հասկացությունների էությունը բացահայտվել է իդեալիստական ձևով: Հասկացությունները վերագրվել են գաղափարների անկողմնային աշխարհին, գոյություն ունեցող դրսից և անկախ իրերից ու մարդուց:

## *Ամփոփում*

Ցանկացած գիտական աշխատանք ենթադրում է անցյալի մասին ինֆորմացիա ունենալու անհրաժեշտություն: Եվ դիմումը պատմությանը Յարոշևսկին անվանում է «ստեղծագործական երկխոսություն անցյալի հետ»: Դիմումը պատմությանը հոգեկանի մասին գիտելիքների ծագման ու զարգացման վերլուծություն է և պատմության տիրապետումը չի սահմանափակվում անցյալի տեսությունների վերարտադրությամբ, այլ պետք է ծառայի ներկայիս ակտուալ պրոբլեմի լուծման նպատակով: Անտիկ շրջանի մտածողների տեսությունների իմացությունը անհրաժեշտ է ժամանակակից գիտության զարգացման և իմացության համար: Եվ ինչպես նշել է 15-րդ դարի իտալացի փիլիսոփա-հումանիստ Լորենցո Վալլան՝ «Պատմությունը առավել օգտակար է, այն լիքն է իմաստնությամբ»: Նա մեզ ծանոթացնում է գիտության մարդկանց կյանքի հետ, բացահայտում՝ հանուն ճշմարտության պայքարի ողջ դրամատիզմը, առաջ բերում տարբեր զգացմունքներ՝ հիացմունքից մինչև հիասթափություն:

## *Резюме*

Любая научная работа включает в себя необходимость наличия информации о прошлом. Обращение к прошлому Ярошевский назвал “Мудрым диалогом с прошлым”. Обращение к истории - это анализ знаний о создании и развитии психики. Изучение истории не ограничивается воспроизведением прошлых мыслителей, оно должно служить решению нынешних актуальных проблем. Знание идей античных мыслителей нужно для развития современной науки. Италянский философ-гумманист Лоренцо Валла в XV-ом веке заметил. “История более полезна, она полна мудростью”. Она знакомит нас с жизнью людей науки, раскрывает весь драматизм борьбы за справедливости.

## *Գրականություն*

1. Հայկական Սովետական Հանրագիտարան, հ, 9, Ե., 1983 թ.:
2. Արևշատյան Ս.Ս., Պլատոնի երկերի հայերեն թարգմանության ժամանակը, «Բ.Մ.» 1971, հ.10:
3. Аревшатян, Формирование философской науки в древней Армении, Е, 1973.
4. Аревшатян С.С., Платон и его эпоха (к 2400 летию со дня рождения), М.,1979.
5. Ярошевский, История психологии.
6. Ждан А.Н., История психологии (от античности до современности), М.
7. Якунин В.А., История психологии, Санкт-Петербург, 1998.